

ՀԱՅ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ (1914-1916 ԹԹ.)

Առաջին աշխարհամարտի տարիներին Հայոց Մեծ եղեռնի իրականացման գործում թուրքական պետության պատասխանատվությունը հիմնավորելու առումով կարևոր նշանակություն ունի նաև օսմանյան բանակ գորակոչված հայ զինվորականության դրության, ինչպես նաև նրանց հետագա ճակատագրի ուսումնասիրությունը: Քանի որ բանակն օսմանյան պետության կարևոր կառույցներից մեկն էր, որի դերը պատերազմի ժամանակ առավել մեծացավ, ուստի նրա կողմից իրականացված հանցագործությունները, մասնավորապես հայ զինվորականության ոչնչացումը, նույնպես ենթադրում են պետական պատասխանատվություն:

Սույն հոդվածում կփորձենք տարբեր աղբյուրների համադրության միջոցով ցույց տալ հայ զինվորների ոչնչացման եղանակների համակարգված լինելը, գնահատել օսմանյան բանակի դերը հայ զինվորականության ոչնչացման գործում, անդրադառնալ հայ զինվորների այսպես կոչված «դասալքության» հարցին, որը շահարկվում է Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական քաղաքականության շրջանակներում: Նշենք, որ թեև վերը թվարկված հարցերի վերաբերյալ կան որոշ հրապարակումներ, սակայն հայ պատմագիտության կողմից դրանց մասին համալիր ուսումնասիրություն դեռևս չի կատարվել:

Առաջին աշխարհամարտի ընթացքում օսմանյան բանակի և տարատեսակ հանցագործ խմբավորումների կողմից փուլ առ փուլ իրագործվեց հայ ժողովրդի, և նախ և առաջ պաշտպանունակ ուժի՝ տղամարդկանց ոչնչացումը: Օսմանյան բանա-

կում հայ զինվորականության մի մասը գոհ գնաց անմարդկային պայմաններին, իսկ մյուս մասը, զինաթափ արվելով, սպանվեց: Ջորակոչի առաջին իսկ օրերին քրիստոնյաների զինաթափման հրահանգն արդեն տրված էր: Կառավարությունը միայն հրահանգով չբավարարվեց: Իրականացվեցին խուզարկություններ՝ «Քաբստոցներից զենքեր հայտնաբերելու» և, սարսափի մթնոլորտ ստեղծելով, հայերի ընդվզման փորձերը ճնշելու, հայերին միջազգային հանրության առջև որպես դավաճան ներկայացնելու նպատակով: Թուրքական իշխանություններն անհրաժեշտ համարեցին զինաթափել նաև բանակի հայ զինվորներին, որոնք, նրանց կարծիքով, կարող էին «իրենց ընտանիքին պատահա՞ծ դժբախտությունների լուրը իմանալով, ընդվզել, փախուստ տալ բանակից իրենց զենքերով և կովել կառավարական ուժերի դեմ»¹:

Տարածված է այն տեսակետը, որ թուրքական իշխանությունների կողմից հայ զինվորականությունը զանգվածաբար սկսել է զինաթափվել և ոչնչացվել 1915 թ. հունվարին Սարիղամիշի ճակատամարտից ու 1915 թ. ապրիլին Վանի դեպքերից հետո, երբ Սարիղամիշում օսմանյան ուժերի ջախջախիչ պարտության մեջ մեղադրեցին հայերին, իսկ Վանի ինքնապաշտպանությունը ներկայացրեցին իբրև ապստամբություն: Սակայն վավերագրերից ու տարբեր աղբյուրներից պարզվում է, որ իրականում հայերի զինաթափման հրամանը տրվել էր Սարիղամիշի ճակատամարտից առաջ:

Երրորդ բանակի հրամանատար, գեներալ Իզգեթի ծածկագիր հեռագրից պարզվում է, որ թուրք-գերմանական գաղտնի դաշինքի կնքումից և հայերի գորակոչից յոթ շաբաթ անց՝ 1914 թ. սեպտեմբերի 24-ին, հայերի զինաթափման հրամանն արդեն

¹ Զորմիսեան Լ., Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, Գ շատր (1908-1922), Պէրուֆ, 1975, էջ 358:

տրվել էր²: Այս մասին գերմանական վավերագրերը հաղորդում են. «Բոլորը հաշվի էին առնում այն, որ ռուսները առնվազն կհասնեն մինչև Մուշ, ուստի վճռվեց, «էթե նրանք այդքան հասնելու են, ուրեմն սկզբում մենք կոչնչացնենք հայերին, իսկ դրանից հետո թող նրանք փորձեն գալ»: 1914 թ. նոյեմբերին պաշտոնապես ընդունվում էր, որ նրանք միայն առիթ են փնտրում կոտորածի համար, հենց որ այդ առիթը գտնեն, ոչ մի հայի չեն թողնի կենդանի»³: Դեպքերի ականատես Ա.Դոն գրում է, որ Վանի շրջանի գորքերից կազմված ավելի քան քսան գումարտակներ նոյեմբերի սկզբին գտնվում էին Բերկրիում, Աբաղայում, Արձակում, Խոշարում և Բաշկալեում: Այս ընթացքում Քյոփրի-Քոյում տեղի էին ունենում համառ կռիվներ, իսկ Պարսկաստանի ռուսական զորքը շարժվում էր դեպի Սարայ և Բաշկալե: Նոյեմբերի սկզբին, երբ թուրքերը պատրաստվեցին այս գումարտակները ռուսների դեմ ուղարկել, նախ զատեցին հայ զինվորներին և զինաթափեցին⁴: Նույնը հաստատում է նաև Գրիգորիս վարդապետ Պալաքյանը՝ նշելով, որ Քյոփրի-Քոյի մոտ տեղի ունեցած սաստիկ կռիվներից հետո մի քանի տասնյակ հայ զինվորների «դասալքության» պատճառով հայ զինվորականությունն ամբողջապես զինաթափ արվելով ուղարկվեց Փոքր Ասիայի խորքերը՝ իբր ճանապարհ շինելու համար: Բայց միտումնավոր զրկելով բավարար սննդից, զգեստից, դեղորայքից՝ աշխատանքային գումարտակների հայ զինվորները հետզհետե սովից ու ցրտահարությունից կոտորվեցին: Իսկ 1915 թ. հուլիս-օգոստոս ամիս-

² Dadrian Vahagn N., *The Armenian Genocide: an Interpretation*, Cambridge, 2003, p. 16.

³ Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում (1915-1918 թթ.), ըստ կայսերական Գերմանիայի Արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի, Երևան, 2004, N 35, էջ 101: Տե՛ս նաև՝ Յուհանսոն Ա., *Արտոբյակ ժողովուրդը*, Երևան, 2008, էջ 44:

⁴ Ա.Դո, Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915 թականներին, Երևան, 1917, էջ 99:

ներին հայերի համատարած ջարդերից հետո դեռ ողջ մնացած բեկորները ևս կոտորվեցին թուրք զինվորների կողմից Էնվերի հրամանով⁵: Բանակից փախուստի դիմած հայ զինվորները նույնպես հաստատում են, որ Կովկասյան ճակատում ռազմական գործողությունները սկսվելուն պես իրենց զինաթափել և տեղափոխել են աշխատանքային գումարտակներ⁶:

«Պատերազմի հետ միաժամանակ հայտարարվեց նաև մեծ ջիհաթը, սրբազան պատերազմը քրիստոնյաների դեմ, ուստի քրիստոնյա զինվորներին սկսեցին նայել խորթ աչքերով և ծուր բերաններով. ծեծ, հայիոյանք, բազմատեսակ գրկանքներ և ապա զինաթափություն»⁷, - նշված է «Մշակ»-ում: Հակահայ քարոզչության համար հարմար առիթ ծառայեց նաև ռուսական բանակի կազմում գործող հայ կամավորական ջոկատների հանգամանքը:

Զինաթափումից հետո հայ զինվորները հայտնվեցին օսմանյան բանակի մատակարարման, ճանապարհներ կառուցող և փոխադրություններ կատարող բանվորական գումարտակներում, որտեղ նրանք ճնշող մեծամասնություն էին կազմում: Զինվորական հրամանատարության հաջորդ քայլն այդ գումարտակներում աշխատող հայ զինվորների համար այնպիսի պայմանների ստեղծումն էր, որոնք կնպաստեին նրանց ոչնչացմանը: Շատախի Շուշնամերկ գյուղի վերապրած Խաչո Գրիգորյանը վկայում է, որ ձմռանը շալակավորները գնում էին մինչև մեջքը ձյան միջով անձրևի ու ձյուն ու բուրբի տակ: Տաք շոր չկար հագներին, շատերը բոբիկ ու մերկ էին, որովհետև պատերազմի

⁵ Գրիգորիս Մ. վարդ. Պալաքյան, Հայ գողգոթան, դրվագներ հայ մարտիրոսագրութենեն, Բեռլինեն դեպի Ջոր (1914-1920), Երևան, 1991, էջ 63:

⁶ Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, վերապրածների վկայություններ. փաստաթղթերի ժողովածու, խմբ. Ա. Վիրաբյան, հ. II, Երևան, 2012, N 24, էջ 55, նաև նույնի, հ. III, Երևան, 2012, N 7, էջ 63:

⁷ «Մշակ», Թիֆլիս, 6 յունիսի 1915, N 121:

դաշտ գնացող զինվորները հանում էին նրանց վրայից նոր ոսկանամաններն ու տաք շորերը: Ճանապարհին գնալիս սևուկ չէին տալիս: Ամբողջ օրը անձրևի տակ քայլելուց հետո, երբ հասնում էին գյուղ, նրանց փոխանակ տանելու կրակի մոտ, որ չորացնեն իրենց շորերը և տաքանան, լցնում էին մարագներում, որտեղ մինչ առավոտ դողում էին ցրտից, և շատերն էլ մահանում: Ճանապարհին երբ կանգնում էին շունչ առնելու կամ որևէ բնական պետքի համար, հրացանազարկ էին լինում՝ մեղադրվելով փախչելու դիտավորության մեջ: Ավելին, ոստիկանները հայերին առաջարկում էին ազատվելու դիմաց փող տալ, որը ստանալուց հետո հրացանազարկ անելով սպանում էին*:

Օսմանյան բանակում հայ զինվորականության ոչնչացման համար կիրառվեցին բոլոր հնարավոր միջոցները: Հայ զինվորներ ենթարկվում էին նաև հոգեբանական ճնշման: Ազգային ինքնությունը, կրոնը հայիոյելը, զինաթափումից հետո գրաստի դեր ստանձնելը ստորացնում և վիրավորում էր նրանց: Այս մասին բանակից փախուստի դիմած բիթլիսեցի հայ զինվորները վկայում են, որ թուրք սպաներն իրենց չարաչար աշխատեցրել են, օրերով քաղցած թողել, իսկ ամենահասարակ զինվորներն անգամ իրենց կրոնն ու բոլոր սրբությունները հայիոյել են: Զինաթափելուց հետո հավաքել են Երզնկայի Ծակքար կոչվող ձորի մեջ և ստիպել փորել զանազան տեղեր: Երբ բավական փորել են, ստիպել են իջնել իրենց իսկ բացած փոսերի մեջ, որից հետո հրացանազարկ են արել: Ուստի իրենց ընկերների այսպիսի վախճանը տեսնելուց հետո զիջերը փախուստի են դիմել*:

Բազմաթիվ վկայություններ կան այն մասին, որ գորահավաք կատարելուց հետո զինվորներին ուղեկցում էին ոչ թե գո-

* Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, հ. II, N 169, էջ 253:

* Լույս տեղում, N 34, էջ 71-72, նաև՝ Լույսի, հ. III, N 9, էջ 82-83:

բանոց, այլ ճանապարհին կոտորում¹⁰: Ականց բնակավայրից մի որմնադիր հետևյալն է վկայում. «Հարքեն գյուղի ներքևում մի կիրճ կա, որի միջով հոսում է Դարա-Չամին անունը կրող գետակը: Նոր էինք տեղ հասել, երբ ժանդարմները մի կողմ քաշվեցին և հրացանները մեզ ուղղելով՝ սկսեցին կրակել»¹¹: Ականցի դեպքերի մասին վերապրած Մկրտիչ Հովհաննիսյանը վկայում է, որ ինքը, ազատված լինելով զինձառայությունից, մինևույն է, ձերբակալվել և տարվել է զորանոց, որտեղ իր նման տասնյակ հայեր կային: «Շուտով մեր կայանի դուռը բացվեց և 39 հոգու տարան: Քառորդ ժամ անց դուռը կրկին բացվեց և ևս նույնքան մարդ դուրս հանվեց... Երբ 50 հոգով դուրս եկանք, զորանոցի միջանցքում ժանդարմները զազանի նման հարձակվեցին մեր վրա: Մեզ ժանդարմներով շրջապատված ու միմյանց կապած քաղաքից հանեցին: Տարան Կուրաչի Յուրդի գետափ»: Այստեղ էլ շատերը զոհ գնացին ժանդարմների արձակած գնդակների¹²:

Ալջավազի և Արճեշի շրջակա բնակավայրերից բանվորական գումարտակներ զորակոչելով շուրջ 2500 մարդ՝ 40 հոգանոց խմբերով դուրս են բերել քաղաքից և զնդակահարել՝ դիակները զցելով գետը¹³:

Ավելին, հայ զինվորներին հավաքելով աշխատանքային գումարտակների մեջ՝ թուրք բժիշկները և մանրէաբանները նրանց վրա են փորձարկել բժավոր տիֆի դեմ իրենց ստեղծած երևակայական պատվաստանյութը: Սակայն իրականում հայ զինվորներին ներարկել են տիֆավարակ, ոչ մանրէագերծված

¹⁰ «Փայլակ», Շուշի, 21 մայիսի, 1915, N 21, «Արև», Աղեքսանդրիա, 18 յունիսի, 1915, N 18:

¹¹ Պողոսյան Ս., Պողոսյան Կ., Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն, Հատոր երկրորդ, Գիրք երկրորդ, Երևան, 2002, էջ 20:

¹² Նույն տեղում, էջ 21-22:

¹³ «Кавказское слово», 29 апреля 1915, N 96.

արյուն: Նպատակը պարզ է. «պատվաստանյութը» արագ միջոց էր՝ ազատվելու «փորձարկման կենդանի» դարձած հայ զինվոր-բանվորներից¹⁴:

Օսմանյան բանակում գոյությանը սպառնացող ստեղծված անմարդկային պայմանները, գորակոչվածներին կոտորելու լուրերը, իրենց ազգակից զինվորների գնդակահարությանն ականատես լինելը հայ զինվորներին հարկադրում էին փախուստի դիմել¹⁵: Կառավարության կողմից քրիստոնյա զինվորներից զենքն ու համազգեստը վերցնելը շարքային զինվորների մոտ ընկալվում էր որպես քրիստոնյաների հանդեպ հետագա ավելի դաժան միջոցառումների նախասկիզբ, ուստի այդ հանգամանքը ևս ստիպում էր նրանց փախուստի դիմել¹⁶:

Փախուստի էին դիմում նաև բնակչության կոտորածի սարսափելի տեսարանին ակնատես լինելու պատճառով: Դերջանի գավառի Խումլար գյուղի բնակիչ Հովհաննես Մարկոսյանը, որը աշխատանքային գումարտակ էր տարվել, ակնատես է եղել տեղահանված բնակչության կոտորածին: Նրան և մյուս հայ զինվոր-բանվորներին ստիպել են իրենց ազգակիցների համար փորել գերեզմաններ, սպանվածներին և անգամ վիրավորներին լցնել մեջը և ծածկել: Չդիմանալով նման տեսարաններին՝ հայ զինվորներից մի քանիսը փախուստի են դիմել¹⁷: Փախուստի պատճառ էր նաև այն, որ ռուսական զորքերի առաջխաղացումը կանգնեցնելու նպատակով թուրքական հրամանատարությունը

¹⁴ Геноцид армян в османской империи, сборник документов и материалов под редакцией М. Г. Нерсисяна, Ереван, 1982, с. 438-439. Տե՛ս նաև Dadrian Vahakn N., նշվ. աշխ., էջ 22-25:

¹⁵ «Հայաստան», Սոֆիա, մարտի 14, 1915, թիւ 2:

¹⁶ Геноцид армян: Официальные документы из германских архивов, публикуемые впервые. Вольфганг и Зигрид Густы (составители сборника документов). Под редакцией, с предисл. и прим. Степана Степаняна, Ереван, 2005, с. 70.

¹⁷ Հայոց ցեղասպանությունը Օսմանյան թուրքիայում, հ. III, N 19, էջ 105:

հայ զինվորներին՝ որպես «թնդանոթի միս», ուղարկում էր առաջին զիծ՝ ոչնչացման նպատակով¹⁸։ Վերապրած Տիգրան Մուրադյանը, ով Բուլանըխից դեպի Հասան-կալա և դեպի Մուսերգրում մթերք փոխադրող շալակավորների վերահսկիչն էր եղել, վկայել է, որ Խորում-Դյուզի (Բասեն) կովի ժամանակ իր աչքով է տեսել, թե ինչպես թուրքական զորքը թշնամու դեմ կովելու փոխարեն կրակ է բացել դիրքերում գտնվող հայ զինվորների վրա։ Սա տեսնելով՝ հայ զինվորներից շատերը որոշել են փախչել ռուսների կողմը¹⁹։

Այս և բազմաթիվ նման դեպքեր ցույց են տալիս, որ օսմանյան բանակն իր գործունեության մեջ չի սահմանափակվել միայն ռազմական գործողություններով, այլև ակտիվորեն մասնակցել է նաև հայերի կոտորածներին²⁰։ Ավելին, պատերազմական իրավիճակը ոչ թե խանգարել, այլ նպաստել է, որ բանակը «Հատուկ կազմակերպության» ջոկատների հետ միասին իրականացնի հայ զինվորների կոտորածը. «Բոլոր հրամաններն անմիջականորեն իրականացվում էին բանակի միջոցով, և որոշումներն ընդունվում էին բանակային կառույցներում։ Խոսքը վերաբերում է բանակում հայ զինվորների զինաթափմանը և ոչնչացնելու նպատակով նրանց թիկունքային աշխատանքների տեղափոխմանը»²¹։

Այն, որ հրամաններն իսկապես բանակի միջոցով էին իրականացվում, ապացուցում է նաև Երրորդ բանակի տասնե-

¹⁸ Գևորգյան Հ., Եթե լռեսք, քարերը կաղաղակեն (վեպ-հուշագրություն), Երևան, 2014, էջ 150-153։

¹⁹ Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, հ. II, N 103, էջ 153, N 25, էջ 59, N 27, էջ 62, Геноцид армян: Официальные документы из германских архивов, публикуемые впервые, с. 251.

²⁰ Авакян А., Геноцид армян: механизмы принятия и исполнения решений, Ереван, 2013, с. 123.

²¹ Նույն տեղում։

րորդ գումարտակի անձնակազմի նախկին սպաներից, պաշտոնաթող զեներալ Փերթն փաշայի վկայությունը: Համաձայն այդ վկայության՝ հայերի հանդեպ ոճրագործությունների համար առավել պատասխանատու անձը Երրորդ բանակի հրամանատար Քամիլն էր, որը իր զեկույցները ներկայացնելիս չափազանցել է որոշ դրվագներ և հայերին մեղադրել թուրքական ուժերի կրած բոլոր պարտությունների մեջ: Փերթն փաշան փորձում է արդարանալ, որ հայերի ջարդերի իրականացման մեջ ինքն անձնական պատասխանատվություն չունի, քանի որ պահպանել է Քամիլի կողմից իրեն ուղարկված հեռագրերը, որոնցով հրամայվում էր ջարդեր իրականացնել²²: Անկախ նրանից, որ ջարդեր իրականացնելու հրամանը տրվել էր Քամիլի կողմից, հանցավոր հրամանի կատարումը, այնուամենայնիվ, Փերթն փաշային չի ազատում ջարդերի իրականացման պատասխանատվությունից:

Մի թուրք սպա, որը ծառայել էր զեներալ Հալիլի հրամանատարության տակ գտնվող ստորաբաժանումներում, հաստատել է, որ իրենց ստորաբաժանման բոլոր հայ սպաները և զինվորները կոտորվել են Հալիլի հրամանով²³: Բացի այդ՝ Ալի Իսսանը, որը Մոսուլում Վեցերորդ բանակի հրամանատարն էր, գերմանացի սպաների ներկայությամբ բազմիցս ասել է, որ նա իր հրամանատարության գոտում գտնվող որևէ հայի չի թողնի կենդանի: Անգամ հպարտացել է, որ հայերին սպանել է իր սեփական ձեռքերով²⁴:

Ավելին, բանակում գտնվող հայերին ոչնչացնելու գործում թուրք զինվորականների մասնակցության մասին են փաստում

²² Արչան Թ., Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ. Հայոց ցեղասպանությունը և էթնիկ զտումները Օսմանյան կայսրությունում, Երևան, 2015, էջ 212:

²³ Dadrian Vahakn N., նշվ. աշխ., էջ 15: Si u luvn' Akcam T., A shameful act: the Armenian genocide and the question of Turkish responsibility, New York, 2006, p. 173.

²⁴ Akcam T., նշվ. աշխ., էջ 173:

Սարիղամիշի մարտերից հետո՝ 1915 թ. հունվարի սկզբներին, երիտթուրքերի խիստ գաղտնի ժողովում ընդունված «տասը հրամանները»: Ութերորդ հրամանում մասնավորապես նշվում է. «*Բնաջնջել բանակում գտնվող բոլոր հայերին այնպես, ինչպես այդ պատշաճ կհամարվի. այս պետք է վստահվի զինվորականներին*» (ընդգծումը մերն է – Ա. Բ.)²⁵: Սակայն հարկ է նշել, որ մինչև այս հրահանգները տալն էին սկսել զինաթափել և ոչնչացնել բանակում գտնվող հայերին: Մեր կարծիքով՝ այս «տասը հրամանները» դեռ 1910-1911 թթ. Սալոնիկում երիտթուրքերի ժողովներում ընդունված հրամանների կրկնությունն էին: Քանզի երիտթուրքերն այս հրամանները, մասնավորապես ութերորդը, արդեն իսկ սկսել էին իրականացնել մինչև 1915 թ. հունվարը, իսկ Սարիղամիշում պարտությունն իբրև առիթ օգտագործելով՝ ավելի զանգվածային էին դարձրել հայերի զինաթափումն ու ոչնչացումը:

Բացի այդ, 1914 թ. սեպտեմբերի 23/24-ով թվագրված թիվ 347 շրջաբերականի համաձայն՝ բանակում ծառայող հայ զինվորները թուրքերի դեմ շարժման դեպքում պետք է անմիջապես ուժով ճնշվեին, իսկ հանդուգն զինվորները՝ սպանվեին²⁶: Կապիտան-լեյտենանտ Հանս Հումանի 1914 թ. հոկտեմբերի 16-ին հաղորդած տեղեկության համաձայն էլ՝ 1914 թ. հոկտեմբերին արդեն կազմվել էին հույներից և հայերից բաղկացած աշխատանքային գումարտակներ²⁷:

Վերոնշյալ փաստերը ևս ցույց են տալիս, որ հայերի նկատմամբ միջոցներ էին ձեռնարկվել և որոշումներ էին կայաց-

²⁵ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), աշխատասիրությամբ Արթուր Պեյլեթյանի, հ. I, Երևան, 2005, էջ 28:

²⁶ Աքչամ թ., նշվ. աշխ., էջ 188:

²⁷ Նույն տեղում, էջ 189:

վել նախքան 1915 թ. հունվարին երիտթուրքերի գաղտնի ժողովում «տասը հրամանների» ընդունումը: Որպես հավելում՝ նշենք, որ բանակային ստորաբաժանումներին արտոնություն էր տրվում նաև վերացնելու բոլոր նրանց, ովքեր չեն ենթարկվի կառավարության հրամաններին: Եթե բնակիչներից որևէ մեկը որևէ կերպ գործեր կառավարության հրամաններին հակառակ կամ մասնակցեր զինված հարձակումների ու խռովությունների, բանակի կորպուսների, ստորաբաժանումների և կայազորների հրամանատարները պարտավոր էին անմիջապես գործել զինվորական ուժերով՝ խստագույնս ճնշելու նման դեպքերը, իսկ բռնությամբ ուղեկցվող խռովությունների ընթացքում՝ վերացնելու բոլոր օրինագանցներին²⁸: Այս որոշմանը հաջորդող ամիսներին կառավարությունը նահանգներից ստանում էր հայերի «ապստամբելու» մասին տեղեկություններ, որին էլ հետևում էր ցանկալի որոշման կիրառումը: Այն իր հերթին հող էր նախապատրաստում հայերի տեղահանությունն արդարացնելու համար²⁹:

Այդուհանդերձ, հայ «դասալիք» զինվորների թիվն անհամեմատ քիչ էր թուրք և քուրդ դասալիքներից. «Ավելի շատ թուրքերն էին փախուստի դիմում և հինգ փախչող թուրքին հազիվ մեկ հայ էր ընկնում»³⁰: Այսպես, օրինակ, երբ 1914 թ. դեկտեմբերի սկզբին Քյոփրի-Քյոյի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո ամբողջ թուրքական զորքը փախուստի դիմեց, զնդակահարվեցին միայն փախուստի դիմած և Եղան գյուղում ապաստան գտած 50 հայ զինվորները³¹: Դասալքության խնդրի վերաբերյալ ավստրոհունգարական վավերագրերը նույնպես հայտ-

²⁸ Նույն տեղում, էջ 199:

²⁹ Նույն տեղում, էջ 199-203:

³⁰ Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ., Երևան, 1965, էջ 227:

³¹ Ա՝Դօ, նշվ. աշխ., էջ 101:

նում էլ, որ գորքերը բարձիթողի վիճակում են, տառապում են կարիքից, այստեղից էլ՝ բազմաթիվ դասալիքները³²:

Այն, որ թուրքական բանակում անկարգություն էր տիրում, իսկ զինվորները ողբալի վիճակում էին, վկայում է նաև Օսմանյան կայսրությունում գերմանական ռազմական առաքելության ղեկավար, գեներալ Լիման ֆոն Ջանդերսը: Ըստ նրա՝ պատերազմի առաջին տարիներին թուրքական բանակում հաշվվում էր 300 հազար դասալիք, որոնք թիկունքում զբաղվում էին ավերով ու թալանով³³: Ըստ Յ. Քյունցլերի՝ թուրք զինվորների դասալքությունը ծայր էր առել հենց գորակոչի առաջին օրերից: Հարյուր հոգանոց մի խումբ Ուրֆայից Այնթապ մարզվելու նպատակով ուղարկելուց հետո տեղ էր հասել ընդամենը երեք զինվոր, երեքն էլ՝ քրիստոնյա³⁴: Ըստ Լ. ֆոն Ջանդերսի՝ 1915 թ. հունիսին Կարինի շրջանում դասալքում էին հենց թուրք զինվորները, որոնց թիվը 1916 թ. հասնում էր մինչև 30 հազարի, իսկ 1918 թ. թուրքական բանակում արդեն ավելի շատ դասալիքներ կային, քան զինվորներ³⁵: Վկայություն կա այն մասին, որ փախուստի դիմած զինվորները բարձրանում էին լեռները և ապրում ուղևորների ու քարավանների վրա հարձակվելով, հաշվի չէին առնում հարձակման ենթարկվածի ազգությունն ու կրոնը: Իսկ նրանց բռնելու կառավարության ջանքերն ապարդյուն էին, որովհետև նրանց ձերբակալումը նպաստում էր վրիժառու նոր «դասալիքների» և «ավազակային» խմբերի ի հայտ գալուն³⁶:

³² Österreich-Armenien 1872-1936, Faksimilesammlung diplomatischer Aktenstücke, herausgegeben und eingeleitet von Mag. Dr. Artem Ohandjanian, Bd. VIII, 1918, Wien, 1995, S. 5512. Տե՛ս նաև՝ «Մշակ», Թիֆլիս, 6 յունիսի 1915, N 121:

³³ Սուրեն Ե., Լիման ֆոն Ջանտերս, «Ղրոջակ», Փարիզ, 1929, սեպտեմբեր, N 9, էջ 177-179:

³⁴ Ջուլիցերիացի հայասեր Յագուպ Քիւնցլեր. իր հայանպաստ գործունեության 40-ամեակին առթիւ, Պեյրուք-Հալեպ, 1946, էջ 64:

³⁵ Կիրակոսյան Ջ., նշվ. աշխ., էջ 224:

³⁶ Геноцид армян: Официальные документы из германских архивов, публикуемые впервые, с. 65, Օսմանեան կայսերական բանակի սպայ թիշկ Աւետիս Ճե-

Ի տարբերություն թուրք դասալիքների՝ խտրական վերաբերմունք կար փախուստի դիմած հայերի նկատմամբ: Նրանք անհամեմատ քիչ «դասալքելով» հանդերձ՝ պատժվում էին խստագույն կերպով³⁷: Ուստի՝ այսպես կոչված «դասալքությունը» սոսկ առիթ էր հայ զինվորներին ոչնչացնելու համար:

Հայերի փախուստը պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ Կովկասյան ճակատում ռուսական և թուրքական բանակներում հայ զինվորները կովում էին միմյանց դեմ: «Տաճիկները պարտության ամբողջ մեղքը սկսեցին բարդել հայերի վրա, իսկ տաճկահայ զինվորը, տեսնելով իր առաջ կանգնած ռուս զորքը, նրա շարքերում նաև հայ կամավորներին, ձեռքը սկսեց անգորանալ, չկրակել իր հարագատի վրա, ձգել զորքի շարքերը, հաճախ անցնել նաև ռուսական բանակը», - գրում է Ա-Դոն³⁸:

«Թուրքական բանակում գտնվող հայ զինվորները լքված էին, քաղցած կամ կիսակուշտ՝ դատապարտված խրամատներ փորելու և ձեռքի աշխատանքներ կատարելու: Սակայն ամեն զիշեր, զրկվելով իրենց զենքերից, հանձնվում էին իրենց դարավոր թշնամու՝ մահմեդական ընկերների քմահաճույքին: Ուստի կա՛մ փախչում էին, կա՛մ, «բեղել» վճարելով, առժամանակ ազատվում: Իսկ նրանք, ովքեր այս երկուսից ո՛չ մեկն էին կարողանում անել և ո՛չ էլ մյուսը՝ բնավ չէին հանձնվում և մնում էին փախստական»³⁹:

Անդրադառնալով հայերի «դասալքության» պատճառներին՝ օսմանյան խորհրդարանի պատգամավոր Ա. Վոսմյանը

պեճեանին օրագիրը 1914-1918, Պեյրուք, 1986, էջ 67, Akcam T., նշվ. աշխ., էջ 198-199:

³⁷ Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, Հատոր III, N 19, էջ 104, N 89, էջ 342, N 5 (Հավելված), էջ 396-397:

³⁸ Ա-Դո, նշվ. աշխ., էջ 96:

³⁹ Բրայս Ջ., Անգլիական կառավարության կապոյտ գիրքը Հայոց Մեծ եղեռնի մասին (1915-1916), Թեհրան, 2012, էջ 89:

ներքին գործերի նախարարությանն ուղղված իր հեռագրում նշում է, որ «դասալքության» համար կար երեք պատճառ: Նախ՝ 24 տարեկանից բարձր հայերը գենք գործածել չգիտեին: Նրանք չէին վարժվել այն գրկանքներին, որոնք իրենց պարտադրվեցին բանակում: Եվ, ի վերջո, նրանց կրոնական զգացումներն արհամարհվում էին բանակում: Ըստ նրա՝ «դասալիքների» թիվը սկզբում շատ քիչ էր: Եթե վերոհիշյալ պատճառները հաշվի առնվեին, «դասալքության» աննշան տոկոսը հնարավոր կլիներ վերացնել: Սակայն թուրքական կառավարության անվստահությունը հայերի նկատմամբ նոր պատճառներ ստեղծեց, և «դասալքությունն» ընդհանուր բնույթ կրեց: Այդ անվստահության հետևանքով հայ զինվորներն ու ժանդարմները զինաթափվեցին, իսկ նրանց փոխարեն այդ պաշտոնները հանձնվեցին սպառազեն, մոլեռանդ իսլամադավաններին: Տղամարդկանց բացակայության պայմաններում համիդիե գնդերի մնալը հայկական բնակավայրերում, նրանց գործադրած բռնություններն անպաշտպան բնակչության, մասնավորապես կանանց ու երեխաների նկատմամբ, ստիպում էին հայ զինվորներին բանակից փախչելով նախ փրկել իրենց կյանքը, ապա, նաև վերադառնալով, տեր կանգնել իրենց ընտանիքին, ունեցվածքին ու պատվին: Ուստի պետք է դադարել «դասալիք» բառը գործածել հայերի համար, որոնցից գենքերը վերցրել էին: Ձենքը էական հանգամանք է զինվորի համար: Դասալիք չի կարող լինել նա, ով զինվոր չէ⁴⁰:

Այսպիսով, Առաջին աշխարհամարտի տարիներին օսմանյան բանակ զորակոչված հայ զինվորականությունը գտնվում էր անմարդկային ու ստորացուցիչ պայմաններում, մահվան մշտական սպառնալիքի տակ: Հայ զինվորների զինաթափումը, որի նպատակը նրանց ոչնչացումն ավելի դյուրին դարձնելն էր,

⁴⁰ Տե՛ս «Հայրենիք», Բոստոն, ապրիլ 26, 1915, թիւ 49, տե՛ս նաև՝ Պատպի 2., Մարսափի երկրին մեջ, Լահատակ Հայաստան, Կ. Պոլիս, 1919, էջ 145-148:

սկսվեց հենց այն ժամանակ, երբ Կովկասյան ճակատում ռուսական և թուրքական ուժերի միջև տեղի ունեցան առաջին մարտերը: Բացի նախապես մշակված ծրագրից, 1914 թ. աշնանից ի վեր հայ զինվորականության զինաթափմանը նպաստեց նաև թուրքական կողմի այն մտայնությունը, որ կայսրության տարածքում ռուսական զորքերի հայտնվելուն պես հայ զինվորները կմիանան նրանց: Իրականում այս մտայնությունը հակահայ քարոզչության արդյունք էր: Իսկ ռուսական բանակի հրամանատարության ներքո գործող հայ կամավորական ջոկատների հանգամանքը պարզապես առիթ էր հակահայ քարոզչության ուժեղացման, օսմանահպատակ հայ զինվորներին առաջին զիծ ուղարկելու, նրանց զինաթափելու և ոչնչացնելու համար: Հայ զինվորականության ճնշող մեծամասնությունը սպանվեց ոչ թե ռազմաճակատներում ռազմական գործողությունների ժամանակ, այլ հենց օսմանյան բանակում թուրք զինվորների կողմից, հաճախ զորակայան հասնելու ճանապարհին, իսկ աշխատանքային գումարտակներում շահագործվելուց հետո՝ մույթ ու խուլ անկյուններում: Օսմանյան բանակի կողմից հայ զինվորները ոչնչացվեցին դիտավորյալ կերպով, ինչը նույնպես վկայում է ցեղասպանության պետական ծրագրի առկայության, հետևաբար նաև պետական պատասխանատվության մասին: Ընդ որում՝ հայ զինվորականության ոչնչացման հրահանգները տրվում էին բանակի հրամանատարության կողմից և իրականացվում բանակային կառույցների միջոցով:

Հայ զինվորականությունը ոչնչացվեց ոչ միայն օսմանյան բանակի մահմեդական զինվորների, ժանդարմների միջոցով, այլև միտումնավոր կերպով ստեղծված ծանր պայմանների հետևանքով: Իսկ այսպես կոչված «դասալքությունն» առիթ ծառայեց հայ զինվորների զինաթափման և ոչնչացման համար: Բանա-

կում հայ զինվորների համար արհեստականորեն ստեղծվող անմարդկային պայմանները հեռահար նպատակ էին հետապնդում՝ նրանց հարկադրելով փախուստի, ինչն էլ օգտագործվում էր որպես հարմար առիթ հայ զինվորների ավելի զանգվածային ոչնչացումը կազմակերպելու համար: Մասնավորապես ոտնահարում էին նրանց կրոնական, ազգային զգացումները, մատնում էին սովի, ֆիզիկական ոչնչացման, զինաթափում, ուստի և անպաշտպան թողնում: Փախուստի դիմած հայերը, ի տարբերություն թուրք դասալիքների արժանանում էին ամենախիստ պատժի: Սակայն, այդքանով հանդերձ, թուրքերի համեմատ հայերն ավելի քիչ էին փախուստի դիմում և մահվան մշտական սպառնալիքի պայմաններում կառարում էին իրենց պարտականությունները:

АПХЕН БАСЕНЦЯН

ПОЛОЖЕНИЕ АРМЯНСКИХ СОЛДАТ В ОСМАНСКОЙ АРМИИ (1914-1916 ГГ.)

РЕЗЮМЕ

Во время Первой мировой войны армянские солдаты-призывники Османской армии находились в бесчеловечных и унижительных условиях, под постоянной угрозой смерти. Сравнение различных источников выяснило, что армянские солдаты были разоружены с осени 1914 года, когда на Кавказском фронте начались первые бои между российскими и турецкими силами.

После разоружения армянские солдаты были отправлены в рабочие батальоны, затем были убиты в массовом порядке. Будучи не в состоянии выдержать особо жесткие условия, часть армянских солдат были вынуждена бежать из османской армии. Следует отметить, однако, что дезертирство из армии больше

совершали турецкие солдаты. Спасение бегством и другие обстоятельства стали поводом для массовых убийств армянских солдат. Координированные методы уничтожения армянских солдат в османской армии свидетельствуют о наличии соответствующей государственной программы и об ответственности турецкого государства в целом.

ASHKHEN BASENTSYAN

**THE STATE OF ARMENIAN SOLDIERS IN THE OTTOMAN ARMY
(1914-1916)**

SUMMARY

During World War I the Armenian conscript soldiers of the Ottoman army appeared to be in inhuman and demeaning conditions, being under the constant threat of death. By comparing different sources it became clear that Armenian soldiers had been disarmed since the autumn 1914 when the first fights broke out between the Russian and Turkish forces in the Caucasian front.

After the disarmament they were taken to labor battalions where Armenian soldiers underwent various humiliations. After their exploitation in construction engineering all of them were massively massacred. A part of the Armenian soldiers, being unable to withstand the harsh conditions created for them in the Ottoman army, had to flee. It should be noted that the Turkish deserters of the army were more frequent. The escape and other circumstances became an occasion for the Turkish Military Forces Command for massive massacre of the Armenian soldiers. Coordinated methods of destruction of Armenian soldiers testify to the existence of a state program and therefore the responsibility of the Turkish state as a whole.